

Ս. ԲԱՐՍԵԼԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

« Յարգա Վեցօրեայ ատարց արարչութեան »



Էջ 30 տող 25. « Արդ ընդէր փախ-
չիցիք առ մարտարիսն ի ճշմարտութենէ
աստի, ո՛վ մարդիկ, և պատճառս ի կո-
րուստ կենաց ձերոց կարկատէք » . ուղղ.
« առ մարտարեան » ?

Տգիտութիւնը մարդը մոլորութեան մէջ
կը ձգէ մարդուն , բայց չմարտարեանէ
փախչելու համար հետադարձութիւն , կամա-
կորութիւն և մոլորութիւն հարկաւոր են :
Հիմա . էջ 45 տող 15 :

Էջ 31. տող 17. « Ձի երկու յորժամ
զտանիցին հակառակ միմեանց , մինն ա-
ռաքնութեամբ իւրով կորուսիչ է ընկե-
րին իւրոյ , և բազում դժուարին իրօց
պատրաստեն ի վերայ միմեանց » :

Ուղղ. պատրաստին ?

Էջ. 39. տող 20. « Ընդ տիւ և ընդ
գիշերն համարեցաւ օր մի , և ոչ անուա-
նեաց զանուն տուրնջեան և գիշերոյ , այլ
միտմ անուանեւ ետ զընթացսն երկոցունց » :

Ուղղ. այլ միով անուամբ ետ :

Աստուած գիշեր և ցերեկ մէկ անունով
կոչեր է օր :

Էջ 44. Տող 31. « Երէկ և այսօր և
դեպք լսողք բանիցն Աստուծոյ , և լուսն
զի ասաց , թէ « եղիցի լոյս և եղև լոյս » :
Եւ դարձեալ այսօր ասէ , թէ եղիցի հաս-
տատութիւն , և յայտ է՝ թէ ինչ մի առաւել
ծածկեալ կայ ի լուր այսց երկուց նմանի
պատգամաց » :

Ուղղ. Բանից ?

Ուղղհետեւ երկու պատգամները նման
չեն , ուրեմն երկուց թանկ քննութեան մէջ
պիտի մտնէ՝ ցուցնելու համար թէ ինչ ա-
ւելի բան մը ծածկուած կայ : Ըստ երե-
ւոյթին « Լոյսն » և « հաստատութիւնն »
նման բաներ են , բայց ոչ իսկութեամբ :

Էջ 45. Տող 3. « Մի թէ ըստ մերձւմ
նմանութեան խօսեսցի Աստուած , որպէս

մեք յիրացն՝ որ անկանին ի սիրտս մեր ,
առնումք անդատին նոցին կերպարանս , թէ
զիմարդ պատճառ իցէ առնել զնոսա » :

Ուղղ. Պատշաճ :

Խօսքը մարդու բերնէն չեւած պէտք է
անցնի « Ընդ ամենայն գործս սպասաւորս
բանին » որպէս զի ըստ պատշաճի լինի
մտածութիւնն և արտաբերութիւնն :

Էջ 45. տող. 15 « Եւ արդ այսպիսի
ինչ կարծել զԱստուծոյ՝ մորոսութիւն մեծ
է , թէ և նա ըստ որում օրինակի ընդ
այսչափ իրս մարմնաւորս անցանիցէ , և
սպա խօսեսցի զսորհեալն » :

Ուղղ. « Ըստ մերում օրինակի » :

Էջ 46. տող 31. « Այլ լաւ համարին՝
որ յաճակեսցին իմաստնանալ առ ի ճառսն
երկնից , թէ լեզուք իւրեանց ստեսցին , և
ոչ մի ճշմարիտ բանք » :

Ուղղ. « Համարիմ... ստիցիկ » :

Վերեւ կ'ըսէ (տող 28) . « Դարձեալ
պարտիմք խնդրել » ուրեմն խնդրողը կըր-
նայ ենթադրել՝ որ իմաստնոց լեզուն սուտ
է , և ոչ մի ճշմարիտ բան չկայ անոնց
խօսքերուն մէջ , կամ թէ՛ ճշմարիտ բան
չեն ընդունիր հաստատութեամբ :

Էջ 47. տող 33. « Ձից՝ տեսեալ քո
զպղպղական՝ որ փչին բոլորին օդով ի
խոնաւութենէ անձրեաց , կամ զիմարդ առ-
նուն գիւրդանչիւր կերպարանս ըստ օ-
րինակի գմբեթացն ճեպելով հոսանացն
ջուրց՝ որ լեզուն ընդ միմեամբք » :

Ուղղ. զեղոս ?

Պղպղականքը ջրի երեսը իրարու վրայ
գեղուած , լցուած , խմբուած՝ կը հոսին
կ'երթան :

Էջ. 50. տող. 22 « Դարձեալ և զո-
րոտմանէ , այսպէս ասեն , եթէ ի հաստա-
տութենէ հողմով՝ որ բախին ընդ միմեանս
յամպս , ի սաստիկ բռնաւոր հողմոցն՝ յոր-
ժամ հարկանիցեն յեթիւր զգոգս ամրոցն՝
ճայթէ , հատանի ճայթիւն որոտմանց » :

Ուղղ. յամպս (Լիկի) . հարկանիցիկ յե-
թիւր՝ (ստորակէտ) զգոգս ամրոցն (ջնջի
բուխ) ճայթէ ... :

Էջ. 51. տող 10. « Արդ ի սոցանէ ինչ
պարտ իցէ առնուլ օրինակ կերպարանաց ,

նմանեցուցանել՝ թէ ջուր էր հաստատութիւն» :

Ուղղ. ոչինչ իւրից :

Վասն զի Ս. Բարսեղ վերը ի մէջ բերելով հեթանոսաց կարծիքները հաստատութեան մասին, կ'ըսէ որ մենք բնաւ չպիտի լսեմք անոնց այսպէս և այնպէս ըսելուն, այլ ինչպէս Ս. Գիրքը կը սովորեցնեն թէ հաստատեցաւ, անկից զուրս չպիտի ելլենք :

Հմտ. բոլոր պարբերութիւնը :

Էջ. 55. տող 12. « Զի գետ մի, որ անուանեալ կոչի չինդոս... Բազարոս և Որասսպէս... Ովփասիս... ի Պիրէանոս. Տարտէոս... Խսորոս... Պեպեցոց... տեպացոց... Ահա անուններ՝ որոնք անհաւանալի են որքան և Ահուճ—Մաճուճն. յորոց իբրեւ թուիք՝ յառաջ կը բերենք համեմատաբար 1. Ովփասիս = Փասիս կամ Ճորոխ ? 2. Պերէանոս = Պիրենեան լեւրինք. 3. Տարտէոս = Տակոյ՝ Սպանիոյ. 4. Խսորոս, ըստ ծանօթութեան իւրոստոս = Իոն կամ Հոնոս ? 5. Պեպեցոց = Իբերիացոց ? 6. Միւս Խսորոս, (Խսորիս) գաւառէն առած անուն = Դանուր ? 7. Թեպացոց = Եւրոպացոց թէ ըստ Խորենացոյ աշխարհագրութեան « յանձնօթ երկիր և ցլիպիս լեռն, յորմէ ելանէ Տօնաւիս գետ » (էջ 595 վերջին տող. Վենետ. 1843). 8. Գաղատիա = Գալիսիա ?

Էջ 56. տող 8. « Հանդերձ նեղոս գետով, որ և ոչ զկերպարանս գետոց ունի, այլ ծովու ելանք են յորժամ ելանէ լնու զերկիրն եզրկատացոց՝ արբուցանել զամենայն բոյսս երկրին » :

Ուղղ. « Գետոյ ... նմանի » :

Էջ 57. տող 28. « Եւ իբրեւ սպառի որ ինչ ծծիկն և ձգի, և պակասէ խոնաւութիւնն արեան նորա, և շիջանի յափի և այն որ զջերմութիւն ունէր » :

Ուղղ. Մօթի.... յանգի ?

Էջ 58. տող 35. « Եւ մեք մի՛ վասն այսր աշխատ լիցուք, այլ զայս իմասցուք՝ թէ ջերմութիւն իցէ արարեալ ընութեամբ, կայ ևեթ խոնաւութիւն » :

Ուղղ. Խոնաւութեամբ :

Որովհետեւ ջերմութիւնն սպառիչ է, ուստի կարօտ է խոնաւութեան ապրելու համար :

Էջ 59. տող 8. « Այլ ահաւասիկ տեսանեմք զամենայն արութիւն մեծութիւն իւրով սքանչելագործ իմաստութեամբն » :

Ուղղ. զամենագորութիւն մեծութեան կամ զամենագոր մեծութիւն :

Էջ 59. տող 39. « Եւ այսու ամենայնիւ ոչ գտանի հիմն ճառից նոցա՝ Եկեացուք և մեք այսուհետեւ ի միտսն » :

Ուղղ. « Ի մերսն » :

Յետ թուելոյ Յունաց կարծիքները հաստատութեան մասին և գտնելով անհիմն, կը յաւելու. այժմ զառնանք մերթնին :

Էջ 62. տող 27. « Եւ որ 'ի ներքոյ երկնից մնացին ջուրք՝ կան ի վերայ երկրի, ժանտը և զարշելիք են, ասէ, և իբրեւ զխոտանս և զանարգս մնացին ի խոնարհ, զի պղտորեալք և դեղնիւնալք են, և միշտ անդադար պատերազմի մարտ եղեալ կընուին, և այսք չարք քոն հանգչին ի վերայ նոցա, և միշտ ամբոխեալք և դղրդեալք են ալեք » :

Ուղղ. « Նեխեալք ... մարտ պատերազմի (կամ պատերազմաւ ?) քոն » :

Գարշելի և անարգը իւր համապատասխանը ունի նեխեալք : Իսկ ծովը ալէկոծելու համար այսահար հովեր կու գան և կը փչեն անոր երեսին և կը խռովեն միշտ :

Էջ 62. տող 37. « Այսպիսի բանք իբրեւ երազոց պատմութեանց նման են, և իբրեւ բարբառն ծերութեան՝ որ անցեալ զառանցեալ իցէ անկանել ի բանից՝ հաստատութեան » :

Ուղղ. « Անկեալ » :

Էջ 66. տող 11. « Եւ կէսք զշահ եւս վաճառացն, զոր ժողովնն միշտ ի հրապարակաց թողուն և երթան անդր դատարկանան. և կէսքն զգործ արուեստից, որ գտանեն զգարման կենաց իւրեանց » :

Ուղղ. « Ուրով » :

Էջ 66. տող 17. « Եւ զայն ոչ առնուն ի միտ, թէ գուսանութիւնն իւրովք պա-

տիր արուեստիւր զապականութեան նշա-
նակ գործէ ի տեսողս իւր, և իբր շառ-
կանաց են անդ, որոց առաջին ամենայն
մարդկան ղեկին ծանակութիւնքն»:

Ուղղ. «Առաջի... ղեկին»...

Էջ 68. տող 3. «Հայեցուր զարձեալ
և ընդ ջուրս զարմանիչս մեր, որովք լը-
նուն և կատարին պէտք մերոյ կարօտու-
թեանս, թէ զխորդ և նոքա յօրինեալ
յարդարմամբ խաղան միանգամայն ի միա-
սին»:

Ուղղ. յորդարմամբ:

Հմտ. «Իսկ և իսկ իբրև սկսանին շար-
ժիլ գնացք նորա՝ յորդին ստիպեն յորդու-
թիւնք բազմութեան նոցա»։ Էջ 69. տող
2. — «Որ ունին զանդաղար գնացս և
զանսխալն յորդարման»։ Էջ 71. տող 1:

Էջ 70. տող 13. «Եւ ես զայս . . .
ջուրքն... ոչ միայն յորժամ գտանիցեն
զառ ի թափ տեղիս, այլ և ի ներքոյ ի
վեր համարածցին ելանել երկնապողոյ»:

Ուղղ. «Երկնապող»։ ող կրկնուած կը թուի:

Էջ 70. տող 18. «Ոչ գետեղակալ
ջուրքն մօրացելոց ասեմ, որ պաշարեալ
գետեղակալ զմի և զնոյն կայանս ունին,
որ տաանք գնացից և առանց շարժելոյ են,
լստ օրինակի ոսկոց պաշարելոց, որ գետղ
առեալ՝ կան արգելեալ ի պաշարն»:

Ուղղ. «Զօրաց»։ Համեմատութիւն մը
կայ հոն լճերու և ծովերու, որոնք այն-
պէս պաշարուած են իրանց սահմանին մէջ,
ինչպէս զօրքը պաշարուած թշնամիներէ:
Հմտ. «Հասանել բանակել (ջուրքն բազ-
մութեան) առնուլ զետղ և զկայանս ի
տեղւոյն՝ որ (ուր?) նկարեալ մեկնեցաւ
նոցա»։ Էջ 71. տող 8:

Էջ 71. տող 3. «Արդ եկն եհաս առ-
տոածարար հրամանն ի վերայ ջուրքն
բազմութեան, զետալ խաղալ միահոյլ ի
մի վայր ժողովել ամենեքին միանգամայն
միով ակնարկութեամբ»:

Ուղղ. «Ատոածարարաւ հրամանն»:
Նախ հրամանն անձնաւորական բան մը
չէ՝ կարող ըլլալ, ուստի և ոչ աստուա-
ծարար կարէ գալ. իսկ մեր ուղղութեան
ի նպաստ՝

Հմտ. «Ատոածարարաւ ձայնին
հնազանդեցաւ»։ Էջ 76. տող 9. «Եւ այ-
սու աստուածարարաւ պատգամաւ»։ Էջ
138. տող 25: —

Էջ 71. տող 15. «Արդ քանզի եղել
ի վերայ նոցա մեծասաստ հրաման ի ծո-
ղովոյն՝ ամփոփիլ ի մի վայր հասանել,
սրտին գնացս և ընթացս ճեպել ստիպել
հասանել արգելուլ զիւրաքանչիւր տեղիս
ետեղակալս»:

Ուղղ. «Հրաման ի ժողովել ... առին
գնացս»:

Էջ 73. տող 19. «Եւ ոչ միւս ծոցն
Ռուստինայ կղզւոյն» = Բրիտանիա?

Էջ 74. տող 31. «Եւ ոչ Սերբուհի-
տէս»? ծովակ, որ է ընդ Եգիպտոս և ընդ
Պաղեստինէ աշխարհ ի միջիոյ:

Ուղղ. «Աշխարհամիջիոյ»?

Էջ 75. տող 1. «Ասեն ոմանք զծո-
վէն՝ որ անուանեալ կոչի Հիւրկանիայ, և
զնորուն ընկերէն՝ որ անուանեալ կոչի
Կասպիտոյ»:

Ուղղ. «Վրկանայ? ... Կասպից»:

Էջ 75. տող 19. «Եւ միւսն Եգեւոս
և Ոնեկինոս և միւս ծոցն Սարգոնիկէ աշ-
խարհի, և միւսն Սիկիլիա աշխարհին,
դարձ բազում եւս այլ անուամբք»:

Ուղղ. «Յոնիական? հանդերձ բազում ոչ
. . . »:

Էջ 77. տող 1. «Սոյնպէս և բնու-
թիւնք նախ յօղուած ունին ի միմեանց,
և ապա իւրաքանչիւր ըստ կերպարա-
նացն, որպէս և առիկն, սոյնպէս և երե-
ւին, և հասանեն զօրութեամբն՝ զոր ունինոյ»:

Ուղղ. «Որպէս և առիկոյ»:

Ոչ որ չէ ասողը, այլ ինքն ըստ ին-
քեան ամենայն բնութիւն կ'երեւի ըստ կեր-
պարանաց, որ տրուած է անոր՝ արար-
չութեամբ:

Էջ 77. տող 5. «Արդ ինչ որ կազ-
մեալ կայցեն ի բնութեանցն, և անկցին
ընդ ազգամար՝ ըստ արարածի բնութեան
իւրեանց, ունին ըստ իւրաքանչիւր զօրու-
թեան իւրեանց»:

Ուղղ. Ունին կապ, կամ հաղորդութիւն ու-
նին:

Ս. Բարսեղ կ'ըսէ որ զգայարանաց տակ ինկնող առարկայք բաղադրեալ են և ե չիք ինչ ի նոսա պարզ և լոկ և միանձնո արդ սոքա կը կապոյին և կամ կը հաղորդոյին իրարու հետ:

Հմտ. Ա ի պատճառս սոցա (Չուր և հուր) երկուքին կապեալ կան ի նմա... կապեալ է ընդ օդոյ վասն ջերմութեան, և հաղորդի ընդ երկրի վասն ցամաքութեան... զի ընդ միմեանս յօդեալ են և ընդ միմեանս կապեալոյն Սնդ տող 23-32:

Էջ 79. տող 35. «Զիցէ՛ տեսեալ ձեր զկատասայս և սանս լի ջրով եռացուցեալս ի հրատի, և միտ եղեալ թէ զիարդ լինիցի թերութիւն ջրոյն ի գոլորշոյն որ ելանէ: Զի թէ յերկարեցան թողցեն ի բորբոքեալ հրատին, բնաւ ամենեւին իսկ ունայն գտանին ամանք ի ջրոյ անտի, և զջուրն զոր ուտէ հուրն ի խոնարհ առաքէ գոլովն ի վեր»:

Ուղղ. կիտաղրութիւններն այսպէս. «Եւ զջուրն՝ զոր ուտէ հուրն ի խոնարհ՝ առաքէ գոլովն ի վեր»:

Հրատի վրայ գրած կատասան եռալով կը պակսի ջուրը, որպէս թէ կրակը ի ներքուստ կ'ուտէ, կը սպառէ, բայց միեւնոյն ժամանակ կատասայի միջի ջուրը գոլորշիովն վեր կ'ուղարկէ տակի հուրը:

Էջ 80. տող 27. «Եւ ես զի՛նչ իցեմ տկար մի տառապեալ՝ կալ ճշգրտիւ պատմել զմեծապայծառ զեղ վայելչութեան ծուռ...»:

Ուղղ. «այր մի տառապեալ»:

Էջ 80. տող 36. ... «Արամբք և կանամբք, և խառնադանջ տղայոց, և որ երգեն զերգս օրհնութեան»:

Ուղղ. «Տղայովք կամ խառնադանջ ձայնի տղայոց», որք օրհնութիւն կ'երգեն ըստ այնմ «ի բերանոյ ստեղծեցաց կատարեցեր զօրհնութիւն»:

Էջ 80. տող 38. «Եւ խոր և անշարժ խաղաղութիւնն Աստուծոյ պահեսցէ զեկեղեցի իւր ի դառնաշունչ հողմոց, այսինքն ի խաղաղութեան հերձուածոցն, և ի չարեացն նենգաւոր ուսմանց անխայեսցէ զխաշն արօտի իւրոյ...»:

Ուղղ. և ի խաղաղութեան... ի չարացն: Զարիք՝ չարի արդիւնք է. նենգաւոր ուսման գտիչն չարն է:

Էջ 82. տող 4. «Պատշաճող յօրինուածով յետ հանգչելոյ երկրի ի ծանրութենէ ջուրցն, որ ունէին զերեսս նորա, եղև ի վերայ նորա հրաման արարչին»:

Ուղղ. Պատշաճ յօրինուածով, յետ հանգչելոյ... եղև... հրամանն»:

Էջ 83. տող 8. «Եւ զի ժպրհեցան ասել արեւապաշտոն՝ թէ ի նորա տեսչութենէ է ամենայն ինչ, զարմանք՝ որ կալան զնոսա վասն մեծութեան նորա՝ նոյնք լիցի նոցա յամօթ և ի պատկառանս, զի բոյսք և բողբոջք երեւեսցին քան զնա լինելով, և կրտսեր է քան զնոսա արարածով»:

Ուղղ. «Նոյն... երեւեսցին յառաջ քան զնա»: Արեւն չորրորդ օր ստեղծաւ, ուրեմն բոյսք անկից յառաջ երեւցան:

Էջ 83. տող 13. «Ալլո զինչ արատցոք՝ զի զդարման անասնոցն»:

Ուղղ. «Ասացոք»? Իսկ պատասխանը ի ստորեւ կարդա, շարունակութեան մէջ:

Էջ 84. տող 27. «Եւ կամով, զի զբտանիցին ի մեզ միտք ճշմարտաւէրք, որ հաստատեցան, նկարեցան ի մեզ մեծաքանչ զարմանալեօք զուրախութիւնն և զեղջ ոգւոյ, յորժամ կարկառեալ հայիցիմք ի ծաղիկս մեծապայծառս, որ յետ սակաւ ինչ ժամանակաց խամրին և թառամին: Նկատեսցոք նոքօք միշտ ի միտս մեր»:

Ուղղ. «զվերջ ոգւոյ (այսինքն կենաց) ... Նկարեցոք»:

Թէպէտ այս աշխարհի ուրախութեան կը յալորդէ զեղջն և տանջանքն, որպէս պատահեցաւ մեծատանն և փոխադարձը աղքատ Ղազարոսին, սակայն այս չէ բռնազրի իմաստը. այլ Ս. Բարսեղ կեանքը կը նմանցնէ ծաղիկի, որ այգուն այնքան վառ վառ և պայծառ է, (այս է ուրախութիւն մարդոյն). իսկ երեկոյին չհասած՝ արեւն և խորշակը կը մեղցնեն «յետ սակաւ ինչ ժամանակաց խամրին և թառամին» և դա է վերջը ոգւոյ կամ կեանքի:

քի: Մարգարէն ծաղկի օրինակով արդէն կանխաւ արժանաւոր կերպով պատկերեր է մարդո՝ վաղանցուկ կեանքը:

Հմտ. նորա շարունակութիւնը:

Էջ 85. տող 17. «Եւ այսու ամենայնիւ մինչդեռ զուարճացեալ վայելէր՝ յանկարծակի վաղկապակի հասանէ ի թշուառութիւն, վատէ ի զօրութենէ, անկանի ի կենաց, ծնկի ծիւրի, հիւանդութեամբ քեռանի, յաղթի և թերեւս սակաւակեաց աւուրբք վճարի»:

Ուղղ. «Յտղիկ»:

Թողախտաւորին արդէն տիրել է հիւանդութիւնը, կամ ըստ ռամկաց բացատրութեան բազաւորեր է, այնուհետեւ կեանքը երթալով կը մաշի, կը տանջուի և կը քայքայուի (յաղկի) և սակաւօրեայ կը մեռնի ծաղկահասակ երիտասարդը. ըստ Անտոնեանց օրինակի «ծնկի ծիւրի հիւանդութեամբ քեռանի յախտի» (Տես Նորայրի Բառաքան. էջ 64):

Էջ 86. տող 24. «Եւ ահա այլ զԴՆԷ ևս Յետ այսր ամենայնի գայէ հասակիցի ի վերայ հպարտացեալ աչաց ամբարտաւանին, յանկարծակի ի միում գիշերի հասանի ցաւ յանկարծակի իբրեւ զնետ մոյրական, և քերմ և տենդ տապախառն իբրեւ զհուր բորբոքեալ հնոցի»:

Ուղղ. «Եւ այլ զԴՆԷ ևս յետ այսր ամենայնի... յանկարծակի ի միում գիշերի հասանէ (յանկարծակի կրկնուած է) իբրեւ զնետ մոյրական...»:

Ս. Բարսեղ նախ տալով բռնաւորի նշանակարութիւնը, ինքն իրեն կը հարցնէ թէ այդ բոլոր բաներէն յետոյ ի՞նչ կըլնայ պատահիլ ամբարտաւանին, վրայ կը բերէ թէ ինչպէս մէկ գիշերուան մէջ ցաւը կը դաշի անոր՝ իբրեւ նետ մոյրական որ հուժեղ բազկէ արձակուած անվերջ ահա հարաւ կը խրի թշնամուր մարմնոյն մէջ: Իսկ մոյրական նետը կը ցնդի յօդս և կը վրիպի նպատակէն:

Էջ 87. տող 9. «Չի եթէ ի ներքուստ յարմատոցն արձակիցի բոյսն, գայ յետ նորին դաւարին, իբրեւ զեղեգան և զսիւղոյ. սակայն նախ ի բոյսն է կարօտոռ»:

րիան, և եթէ ի սերմանէ արձակիցի բոյսն, գայ յետ նորա դաւարին, և ապա կարգի ի խոտ»:

Ուղղ. «Կարողորիան... արձակիցի»:

Սերմի մէջ ներփակեալ է բոյսն յորում է կարողորիան բուսականութեան, ուստի երբ հողի մէջ կը բացուի սերմը, բոյսն արձակուելով կը կանաչանայ և խոտ կը դառնայ:

Էջ 87. տող 33. «Եւ այսպէս ի սակաւ բուսոյն՝ ի կատարեալ չափ սերման գան ամենայն սերմանիք, որ պատշաճեալ են ի բոյս և յաճումն»:

Ուղղ. աճումն:

Սերմանիք՝ բուսցնելու համար են, իսկ բուսնելուն կը յաջորդէ աճումն ինչպէս հեղինակս իսկ կ'ըսէ. «Սերմանիք պատշաճեալ են ի բոյս և յաճումն»:

Էջ 87 տող 38. «Եւ արդ երկոցեան իբրեւ, ճախարչոյս բոյսն և յետոյ պատմական սերմանեաց առհասարակ սքանչացուցանեն, յորում միտ եղեալ մեղմով նաւ յիցիս»:

Ուղղ. պատմական սերմանց: Առաջին զարմանալի է՝ ցօղ ցորենոյ՝ որ ծնկակապ կապօք իբրեւ հանգոյց հանգոյց կապուած է, հաստատութեան, ամբողջեան համար, իսկ երկրորդ զոգածեւ փոճուկը հասկի մէջ, պահպանելու համար՝ սերմը իբրեւ պատան, իբրեւ ամբաժածուկ պատնէ՛լ մը՝ թշնամիներու դէմ:

Հ. Գ. ՆԱԶԱԳՅԱՆ

Շարայարելի

“IMPALUDISME,” Ի ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

— Հ. Կ. Տ. Ս.

«Ծանփից» բառիմ համարժեք Եղիւր բառն անծածօք էր թիմ, և արդէմ դովաւ ածածց մը «Եղիւրիախտ» շատ ամենիրգաշմակ է:

«Երբ» բառով խորհած էի դարձմն, սակայմ չէի յանդգմած կասկածելով թէ՛ Մայր բառէմ ածածցեալ պիտի եմթաղորով, իբրեւ ֆրամսերէմ mal de mordre ի թարգմանութիւմ յօր ցաւ. Սակայմ եթէ այդ շփոթութիւն չէր կարծեք որ տեղի ունեւայ՝ սիրով կը գեղըմտրեմ Երբախտ՝ ճահճախ բարբարոս հիմամբ բառէմ.

Տեսմենք ի՞նչ պիտի ըսէ իմ հայկաբաժմ արուեստակիցս տիւր Սմբ. Գարբիւնեան.

— Տ.